

ճարեղ պապերէն մեղ հասած շատ ձեռն-
դիր գրքերու բազմաթիւ թերթերը եւ լու-
սանցքները զարդարած են բարձր արեւո-
տով կատարած մանրանկարներով, որոնք
այսօր հիացմունք կը պատճառեն մեր ժա-
մանակի նկարիչներուն:

Ահա այդ լաւագոյն նկարիչներուն մէջ
պատուաւոր տեղ կը գրաւէ Սարգիս Պի-
ծակը, որու կեանքի եւ նկարչական գոր-
ծունէութեան մասին մինչեւ օրս ալ հրա-
պարակի վրայ չունինք որեւէ գրքոյի:

Այդ կարեւոր բացն այսօր կու գայ լը-
րացնելու վաստակաւոր եւ հմուտ բանա-
սէր - քննադատ Արամ Երեմեանը՝ իր
«Մանրանկարիչ Սարգիս Պիծակ» խորագիր
գրքոյով, որ իր ամբողջութեամբ բարե-
խիղճ ուսումնասիրութեան արդիւնք է:

Գրքոյի առաջին մասերու մէջ յարդելի
բանասէրը տեւր է ԺԲ-ԺԴ դարերու հայ
ժողովրդի քաղաքական մտայն գէպերու,
մանաւանդ հայ մշակոյթի հարազատ պատ-
կերը: Այնտեղ կը տեսնէք հայ պատմա-
գրական, իրաւաբանական, դիտական,
բժշկական, գեղարւեստական գրականու-
թեան եւ ժողովրդական բանահիւսու-
թեան, ինչպէս նաեւ երաժշտութեան,
ճարտարապետութեան եւ քանդակագոր-
ծութեան էջերը, որոնցմով կարող է պար-
ծենալ ամէն մի առաջադէմ ժողովուրդ:
Այս բաժնի մէջ հեղինակը յայտ է բերեր
նրեթն ուսումնասիրելու, խորացնելու եւ
վերլուծելու կարողութիւն:

Այնուհետեւ գրքի մէջ հանդէս կը գան
Կիրիկեան մանրանկարչութեան տաղան-
դաւոր արեւստագէտները, որոնց շարքի
մէջ պատուաւոր տեղ կը գրաւէ մանրանկա-
րիչ Սարգիս Պիծակը, որ ապրեր եւ ստեղ-
ծագործեր է ԺԴ դարի առաջին կէսի մէջ:

Շնորհիւ Երեմեանի գրքոյի՝ ցայտուն
գաղափար կը կազմէք Սարգիս Պիծակի
արեւստի հիմնական յատկանիշներու մա-
սին: Դրազարկի եւ Սսի տաղանդաւոր այս

նկարիչն իր դարաշրջանի մէջ փայլեր է
որպէս նշանաւոր մանրանկարիչ, դիմանը-
կարիչ, գրաֆիկ նկարիչ եւ ոսկող:

Այնուհետեւ Երեմեանը հանդամանօրէն
պարզեր է նկարչի ծնողներու եւ Պիծակ
մականւան պատմութիւնը: Նոյնպէս ամ-
փոփեր է հայ բանասիրութեան պատմու-
թեան մէջ Պիծակի մասին արձանագրած
կարծիքներն ու տեսակէտները, սրբագրե-
լով նաեւ Երեմեանի պետական նկարչական
թանգարանի վարիչներէն՝ Ռուբէն Դրամ-
բեանի սխալ բնորոշումները:

Գրքոյի կարեւոր մասը կը կազմեն նաեւ
Պիծակի նկարչական ժառանգութեան մա-
սին տրւած փաստական տեղեկութիւննե-
րը: Այնտեղ ձեր աչքերու առջեւ ցայտուն
կը պատկերանան Ռուբինեան դարաշրջա-
նի պայծառ դէմքերը — հայ արքաներ,
թաղուհի, դատաւոր, կանայք, հովիւներ
եւ այլ կերպարներ:

Այս բոլորէն յետոյ Երեմեանը կու գայ
այն ճիշտ եզրակացութեան, որ «Սարգիս
Պիծակի նկարները Ռուբինեան դարաշրջ-
անի հայ մանրանկարչութեան զարգաց-
ման հիմնական եւ ուրոյն էջերը լուսաբա-
նող թանկագին յիշատակներ են, որոնք
ցայտուն գաղափար կու տան Պիծակի
ինքնատիպ նկարչութեան, նրա գեղեցիկ
ճաշակի, ոճի, ուղղութեան եւ արեւստի
առանձնատկութիւնների մասին, մի
նկարիչ, որի վրձինով կարող է պարծենալ
ամէն մի մշակութային ժողովուրդ»:

Գրքոյին արժէքաւորում են նաեւ Սար-
գիս Պիծակի վրձինը պատկերող մի շարք
մանրանկարները:

Տաղանդաւոր Պիծակին ներկած այս
առաջին գրքովը իր լուրջ, դիտական եւ
բազմակողմանի բովանդակութեամբ ար-
ժանի է առանձին դնահատութեան եւ որը
ջերմօրէն կը յանձնարարենք գեղարւեստա-
սէր ընթերցողներին:

ԱՐՇԱԿ ՊԱՆԳՆԱՆ

Մ. Ա. Ա. Զ. Գ. Ի. Ն. Ե. Բ.

ՆԱԽԱԲԱՆ

Ա.

Տարօրինակօրէն բեղուն է բնութիւնը,
անոր դորովալից ծոցին մէջ տեւական
եռուղեովի մէջ է կեանքի աւելը, կենդա-
նութեան հրաշափառ խորհուրդովը օժտե-
լած անթիւ ու անհամար էակներ կը վըլի-
տան մթնոլորտին մէջ, երկրիս երեսին,
հողին տակը եւ ծովերուն անսահման տա-
րածութիւններուն մէջ:

Տառացիօրէն ողողուած է բնութիւնը
կեանքով, հակառակ բոլոր խոչընդոտնե-
րուն, հակառակ բոլոր աննպաստ պայ-
մաններուն, կեանքի հուրը կը մնայ տե-
ւականօրէն անշէջ: Կեանքը՝ իրբեւ դերիշ-
խան երեւոյթ՝ կը ձգտի իր գոյութիւնը
անսասան պահել, օգտուելով իրեն ընծայ-
ուած ամենադոյզն պատահութիւններէն:
Ան՝ ապշեցուցիչ հնարամտութիւններու
զնով, անթիւ ու անհամար ձեւափոխու-
թիւններու եւ պատշաճ կարգադրութիւն-
ներու շնորհիւ, դմալիլի կերպով կ'օղ-
տագործէ զանոնք, անհնարը՝ հնարաւոր
կը դարձնէ ու կենդանի էակը կ'օժտէ այն-
պիսի բարեմասնութիւններով, որոնք ա-
ռաւելագոյն չափով կը նպաստեն անոր
սնդագութեան, աճումին եւ երկարակե-
ցութեան:

Բայց հակառակ այդ ուղղութեամբ
թափուած բոլոր ճիշդերուն, իւրաքանչիւր
էակի կեանքի տեւողութիւնը, լաւագոյն
պայմաններու մէջ իսկ, սահմանափակ-
ուած է, դատապարտուած է մաշելու,
հիւծելու եւ մահանալու:

Մահուան անրոնաբարելի օրէնքին դէմ
հակադդելու համար, կենսունակութեան
հուրը անշէջ պահելու համար, կեանքի

հիսաքանչ խորհուրդը պարտադրած է
իւրաքանչիւր էակի, իր անցաւոր գոյու-
թեան ընթացքին, շոյլօրէն նպաստելու
կեանքի կայծը ապագային փոխանցելու եւ
յաջորդական սերունդներու հոլովոյթը
անվթար պահելու հոգածութիւնը:

Այսպէսով, իւրաքանչիւր էակ՝ սեփա-
կանատէրն է կեանքի մասնիկին, ու նոյն
պահուն, անոր աւանդապահ:

Իբր սեփականատէր՝ ան կ'ապրի բնու-
թեան ծոցին մէջ ամենահամեստ բջիջի մը
սահմանափակումով, կամ բջիջային
զանդուածի մը ամենաբարդ տուեալներով
օժտուած:

Կազմախօսական ձեւակերպումի եւ կա-
դապարումի երեւոյթներէն անկախաբար,
կեանքի կայծով կենսաւորուած էակին
առաջին դիտաւոր պահանջն է՝ անանիւր:

Այդ հրամայական պահանջին աղղեցու-
թեան ներքեւ է, որ կենդանական աշխար-
հին մէջ երեւան կու գան դործարանական
բարդութիւններն ու այլազանութիւնները,
ինչպէս նաեւ յարմարումի դմայլիլի երե-
ւոյթները:

Բայց, ինչպէս որ մատնանշեցինք, կեն-
դանի էակը միայն պահանջներ չունի.
իրբեւ աւանդապահ՝ անոր վիճակուած է
սրբազնագոյն պարտականութիւն մը՝ ա-
ճելու եւ բազմանալու:

Այս մարդին մէջ ալ բնութեան հայ-
թայթած միջոցները դմայլիլիօրէն ճոխ ու
այլազան են:

Զգլիլի թափով միարջիլ էակը իր գո-
յութիւնը կը բիրապատկէ՝ երկուքի բաժ-
նութիւնը կը բիրապատկէ՝ երկուքի բաժ-
նութիւնը, քիչ մը աւելի բարդ էակները
նոյն նպատակին կը ձգտին՝ սերմիկներ -
spores - արտադրելով, իսկ շարք մը ուրիշ
կենդանի էակներ ալ իրենց սերունդներուն

միակտուր կամ շերտաւորուած ըլլալու հանգամանքին վրայ, ապա՝ սերմիկներու (Spores) զոյացման կերպին վրայ:

Սնկաթելերը (Hyphes) սովորաբար կը ճիւղաւորուին եւ որոշ կէտերու վրայ իրարու հետ ձուլուելով, կը կազմեն դանդաղած մը, որուն Թալ (Thalle կամ Mycelium) անունը կու տան:

ՍՆԿԱԶԳԻՆԵՐՈՒ

ՄԱՍՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՆՈՆՅ ՍԵՐՈՒՄԸ

Գ.

Ըլլա՛յ բուսական, ըլլա՛յ կենդանական աշխարհին մէջ, սերումը տեղի կ'ունենայ երկու տարբեր կերպով:

Կենդանի էակներու նախնական խմբաւորումներուն մէջ, սերումը տեղի կ'ունենայ առանց արու եւ էգ բջիջներու զոյութեան, առանց բեղմնաւորութի, պարզապէս միաբջիջային էակին հաւասար երկու մասերու բաժանումով, կամ բջիջին մասնակի ծլարձակումով, եւ կամ թէ սերմիկ (Spores) կոչուած մասնայատուկ բջիջներու զոյացումով:

Այս կարգի սերումին՝ ապաստ (Reproduction asséxué) անունը կու տանք:

Իսկ կազմախօսական տեսակէտով, որոշ չափով յառաջացած կենդանիներէն սկսեալ մինչեւ ամենաբարձր մակարդակին վրայ զոնուողներուն սերումը՝ տեղի կ'ունենայ արու եւ էգ սեռաբջիջներու բեղմնաւորութի:

Սերմիկ այս վերջին ձեւին՝ սեռաւոր սերմիկ (Reproduction sexuée) որակումը կը տրուի:

Կան դէպքեր ալ, որ պարագաներուն բերումով, նոյն էակը կը բազմանայ մերթապատեալ եւ երբեմն ալ սեռաւոր սերմիկով:

Սունկերուն մեծագոյն մասին սերումը

տեղի կ'ունենայ առանց արու եւ էգ տարբերութիւններուն, ու միշտ սերմիկներու միջոցով:

Մի միայն Ֆիքոմիցետ-ներու (Phycomycetes) ընտանիքին պատկանող սունկերն են, — այն սունկերը որոնց թելերուն մէջ զոնուող նախանիւթը անբաժան է՝ բջիջներու չէ շերտաւորուած — որ կը սերին սեռաւոր կերպով, որ է ըսել արու եւ էգ սերմիկներու ձուլումով:

Այդ պարագային արու եւ էգ բջիջները կարող են համանման ըլլալ, ոչ մէկ արտաքին տարբերութիւն չյայտարարել, կամ այլաձեւ ըլլալ:

Ֆիքոմիցետ-ներու այս սերելակերպը բացարձակ չէ, նոյն սունկը կարող է նաեւ ապաստել կերպով բազմանալ, առանց արու եւ էգ բջիջներու համադրութեան, այլ միակ սերմիկի մը միջոցով, այնպէս՝ ինչպէս որ տեղի կ'ունենայ միւս բոլոր սնկազգիներու պարագային:

Արդ, տեսնենք թէ ի՞նչ է սերմիկ (Spore) կոչուածը:

Կենդանութեան կայծը յաւերժացնող ձուածեւ կամ կլոր բջիջ մըն է, որ սընկազգիները եւ կարգ մը ուրիշ բոյսեր կ'արտադրեն:

Չանոնք արտադրողները սնկաթելերն են, անոնք կը տարբերին այդ թելերը կազմող բջիջներէն, այն զլիւսաւոր յատկանիւթով, որ անոնց զոյութիւնը մայր սունկին վրայ առժամանակեայ է, հիւրեր են՝ որոնք իրենց զոյացումէն զրեթէ անմիջապէս յետոյ ստիպուած են անջատուիլ, բաժնուիլ ու միջնորդին մէջ շրջելէ ետք իյնալ յարմար միջավայրի մը ծոցը, եւ հոն նոր սունկի մը զոյութիւն տալով յաւերժացնել բնութեան մեծագոյն պատգամը՝ աճիլ ու բազմանալ:

Մայր սունկէն սերմիկներուն արտադրումն ու ցրումը տեղի կ'ունենայ բազմապիսի միջոցներով, մերթ՝ զմերթ մը անզգալի ծփանքն է, որ կը քշէ զանոնք

ու մղոններով հեռուները կը տանի, երբեմն ալ նոյնինքն սունկն է, որ ռումբի մը պէս կը պայթեցնէ սերմիկներու պահարանը ու կ'արտաքսէ զանոնք հեռուները:

Սերմիկներուն քանակը տարօրինակօրէն ճոխ է եւ նոյնքան ալ առատ անոնց ցրումը:

Սերմիկներուն քանակական արտադրութիւնը ոչ միայն կը տարբերի մէկ տեսութեան, չորութեան, տաքութեան, պաղութեան եւ այլ Ֆիզիքական ազդակներու փոփոխութեան:

Բայց ինչ որ ալ ըլլան արտաքին պայմանները, սունկերուն սերմիկ բացառիկ մանրէն՝ անդերազանցելի կը մնայ բնութեան ծոցին մէջ: Չկայ կենդանի էակ մը որ այդ մարդին մէջ կարենայ մրցիլ անոնց, անոնք կը գերազանցեն մինչեւ իսկ հեռ, անոնք կը միջատներու ազնեցուցիչ ձուկերու եւ միջատներու ազնեցուցիչ բեղմնաւորութիւնը:

Մեզ չբնականաբար մթնոլորտը, իւրաքանչիւր երկրաբանին, սունկի միլիոններու սերմիկներով կ'ողողուի, ու նոյն նաւոր սերմիկներով կ'ողողուի, ու անոնք քանակութեամբ եւ նոյն թափով ալ անոնք թափին երկրին երեսին վրայ, հեղեղաւոր մը նման ողողելով կենդանի էակաւոր, մեռած կենդանիներուն եւ բոյսերուն մարմինները, ինչպէս նաեւ մեր ուտելիքներն ու ըմպելիքները:

Միջին հաշուով իւրաքանչիւր սունկ, իր զոյութեան երրորդ օրէն սկսեալ մինչեւ անհետանալը, իւրաքանչիւր վայրկեան նին մէկ միլիոն սերմիկներ կ'արտադրէ:

Մեր շնած օդը, մեր խմած ամէն տեսակի հեղուկները, մեր կերած ամէն տեսակի սննդեղէնները, քիչ թէ շատ, բոլորն ալ այդ սերմիկներէն կը պարունակեն, ու մինչեւ իսկ մեր զործածած կարգ մը ըմպելիքներն ու սննդեղէնները ուղղակի առանց պատճառած խմորումներուն արդիւնքն են:

Հեղինակաւոր սնկաբանի մը՝ Պիւլլերի յայտարարութեան համաձայն, եթէ կարելի ըլլար միայն օդին մէջ զոնուող սերմիկներուն տրամագիծը հարիւր անգամ մեծցնել, արեւին լոյսը կը խաւարէր ու զարմանահրաշ զնդիկներով շրջապատուած կը տեսնէինք ինքզինքնս:

Եթէ զոյութեան կոչուող իւրաքանչիւր սերմիկ իր նպատակին ծառայէր, սունկ մը արտադրէր, աշխարհը ամբողջապէս սնկազգիներու տիրապետութեան կ'ենթարկուէր:

Բարեբախտաբար իւրաքանչիւր երկրի մէջ սերմիկներու մէջէն միայն մէկուն կը շնորհուի աճելու եւ բազմանալու պատեհութիւնը աճելու եւ բազմանալու:


Սերմիկներուն ձեւն ու գոյնը կը տարբերի մէկ ընտանիքէն միւսը, մէկ տեսակէն միւսը: Մանրէաբանին տակ՝ ոմանք կլորակ կ'երեւին, ուրիշներ՝ ձուածեւ, ոմանք ճերմակ, ուրիշներ՝ մոխրագոյն, կարմրաճերմակ, կապտադոյն կամ կանաչօրակ:

Մայր սունկին վրայ իրենց զոյակերտման կերպն ալ այլապէս է, ինչպէս որ ըման կերպն ալ այլապէս է, ինչպէս որ ըման սնկազգիներու ընտանիքներու բաժանումը կը յենու մէկ կողմէն՝ սնկաթելին միակտուր կամ շերտաւորուած ըլլալու հանգամանքին վրայ, միւս կողմէն՝ սերմիկներուն կազմախօսական վրայ:

Արդ, տեսնենք թէ այդ տեսակէտով որոնք են զանազան սնկազգիներու յատկանիւթը:

Բացառիկ պարագաներու մէջ միայն, սնկաթելին բջիջներէն ոմանց նախանիւթը կը խտանայ, բջիջային պատեանը կը կարծրանայ եւ ուղղակի սերմիկի մը կը վերածուի: Այս փոփոխութիւնները կրնան բաժնուիլ: Այս փոփոխութիւնները կրնան հաւասարապէս սնկաթելին միջանկեալ կամ աւարտական բջիջներուն մէջ տեղի կամ ինչպէս որ կը տեսնուի թիւ 2 ունենալ, ինչպէս որ կը տեսնուի թիւ 2 նկարին մէջ: Այս ձեւով ծնունդ առնող սերմիկները Քլամիդոսպոր (Chlamydospores) կը կոչուին:

Ինչպէս որ կանխաւ ըսինք, սերմիկի մը այս ձեւով կազմութիւնը բացատրիկ երեւոյթ մըն է, եւ արգասիքն է սունկին վի-



Նկար թիւ 2. - Սնկաբոյի մը միջանկեալ եւ աւարտական բջիջներով կազմուած սերմիկներ՝ Բլամիտոսպորոններ:

Ա. ընտանիքին կը պատկանին բոլոր այն սունկերը, որոնց թելերուն մէջ գտնուող նախանիւթը (Protoplasme) միակտուր է՝ շերտաւորումէ զերծ:

Ասոնք ընդհանրապէս ապաստել կերպով կը սերին, երբեմն ալ արու եւ էգ սերմիկներու բեղմնաւորումով, իսկ սերմիկները կը կազմուին Սքոռանց (Sporange) կոչուող գունդերու մէջ:

Այս ընտանիքին պատկանող սունկերը կը կոչուին Ֆի-

մակուած ապրելակերպի աննպաստ պայմաններուն:

Սովորական պայմաններու տակ, սունկը իր մարմինին ընդերքէն՝ թելերու հիւսուածքէն՝ զանազան ձեւի նուրբ եւ ուղղաբերձ ցողիկներ կ'արձակէ, որոնց կատարին կամ երկայնքին ծնունդ կ'առնեն սերմիկներն ու զանոնք պարունակող յօրինուածքները:

Ահա այդ յօրինուածքներուն ձեւակերպումովն է որ կը բնորոշուին սնկազգիներու զլխաւոր ընտանիքները:

Նախ քան մանրամասնութիւններու մէջ մտնելը, նպատակաւորաբար կը նկատենք տալ սնկազգիներու ազգահամարը, դոհանալով մատնանշել միայն կարեւոր բաժանումներն ու ստորաբաժանումները:

Ֆիքոմիսեթներ (Phycomycètes)

Ասոնց սերմիկները սքոռանց կոչուած գնդիկներու մէջ կը գոյանան:

1. Ասքոմիսեթներ (Ascomycètes)

Ասոնց սերմիկները Ասք (Asc) կոչուող տոպրակներու մէջ կը գոյանան:

2. - Պագիտիսեթներ (Basidiomycètes)

Ասոնց սերմիկները Պագիտիսեթ կոչուած յօրինուածքներու վրայ գոյութիւն կ'առնեն:

3. - Հիփոմիսեթներ (Hyphomycètes)

Ասոնք զերծ են սերմիկներ արտադրող մասնաշաղկապ յօրինուածքներէ, ասոնք կը կազմուին ուղղակի սնկաթելերու ծրլարձակումներով, որոնց Բոնիտի (Conidies) անունը կու տան:


Բ. ընտանիքին կը պատկանին այն սունկերը, որոնց թելերուն մէջ գտնուող նախանիւթը միակտուր է, այլ բջիջներու շերտաւորում:

Այս տեսակի սունկերուն սերունդը տեղի կ'առնեն միջատապաստել կերպով: Այս սունկերը, իրենց սերմիկները պարունակող մասնաշաղկապ յօրինուածքներուն ձեւին համեմատ, երեք կարեւոր խումբերու կը բաժնուին:

Ինչպէս որ վերեւի դասաւորումէն կը տեսնուի, սունկերը կը բաժնուին երկու մեծ ընտանիքներու. սնկաթելերուն նախանիւթը միակտուր եղողները եւ այդ նախանիւթին բջիջներու շերտաւորումը եղողները:

Առաջին ընտանիքը միակ խմբաւորումէ մը բաղկացած է, Ֆիքոմիսեթներէ:

Այս խումբին թելերու տրցակէն ուղղահայեաց նրբին ճողիկներ վեր կը բարդանան, ասոնք իրենց վերջաւորութեան կ'ընդլայնին ու կ'ուռին: Այդ ուռած մասը Գոլիւմէլ (Columelle) կը կոչուի (տես ներկար թիւ 3): Անոր շուրջն է որ ծնունդ



Նկար թիւ 3. - Աջակողմեան նկարը կը ներկայացնէ Ֆիքոմիսեթներու խմբակ մը, իրենց արմատաման նրբին սնկաբոյերով, անոնց վրայէն վեր արձարացող սերմնատար ճողիկներով եւ սերմնապահ գնդիկներով, որոնք Սքոռանց կը կոչուին:

Չախ կողմը մանրամասնօրէն կը տեսնուին ճողիկը, ասոր վերջաւորութիւնը կազմող ուռը՝ Գոլիւմէլը, Գոլիւմէլը շրջապատող գնդիկը՝ սքոռանցը եւ անոր մէջ պարփակուած բազմաթիւ սերմիկները:

Կ'առնեն բազմաթիւ սերմիկներ, որոնք առժամանակեայ կերպով արգելափակուած կը մնան կլորաձեւ գնդիկի մը, կամ ուռած կը մնան կլորաձեւ գնդիկի մը մէջ: Գոլիւմէլը հոնաձեւ յօրինուածքի մը մէջ: Սքոռանցը եւ զայն շրջապատող գնդիկը Սքոռանց (Sporange) կը կոչուի, իսկ այս ձեւով ծը-

նունդ առնող սերմիկներուն Սքոռանցիկներ (Sporangiospores) անունը կու տան:

Այս ընտանիքին կը պատկանին շատ մը տեսակի նրբակազմ ու մանր սունկեր՝ բորբոսներ: Ասոնցմէ մին է սեւ սունկ կամ հացասունկ կոչուածը:

Բաւական է որ թրջած հացի կտոր մը, կամ պտուղի շերտ մը օդին ձգուի, որպէս զի անմիջապէս անկէ վարակուին:

Սունկերու երկրորդ մեծ ընտանիքը՝ շերտաւորեալ սնկաթելեր ունեցողները՝ շատ աւելի բազմատեսակ եւ բազմաճառ են, ասոնց շարքին կը պատկանին մասոս ու խոշոր սունկեր, ինչպէս նաեւ բորբոսներ:

Այս ընտանիքին կարեւոր մէկ խմբակը կը կազմեն Ասքոմիսեթները (Ascomycètes) (տես նկար թիւ 4):



Նկար թիւ 4. - Ասքոմիսեթ սունկ մը, իր ասքներով, սերմիկներով ու ասքներուն միջեւ գտնուող բառաֆիղներով:

Սնկաթելերուն ոմանց ծայրը, բեղմնաւոր կոչուածներունը՝ ուղղահայեաց կերպով վեր կը բարձրանայ, կ'երկարի, կը լայննայ ու երկար պայուսակի մը ձեւը կ'առնէ՝ որուն Ասք (Asc) անունը կու տան:


Այդ տոպրակներուն մէջ գտնուող կոռիլներուն (Noyaux) շուրջին նախանիւթը կը խտանայ, թաղանթով մը կը կղզիանայ շրջապատէն եւ սերմիկի մը կը վերածուի:

Ընդհանրապէս իւրաքանչիւր աւփ-ի մէջ այս ձեւով ութը սերմիկներ կը կազմուին, սակայն այդ քանակը կրնայ 32-ի կամ 64-ի բարձրանալ: Սերմիկներուն թուական փոփոխութիւնը ինչ որ ալ ըլլայ, անոնք միշտ զոյգ թիւ մը կը կազմեն: Սերմիկները պարունակող այդ յօրինուածքները՝ աւփ-երը՝ յաճախ իրարմէ բաժնուած կ'ըլլան հասարակ սնկաթելերով, որոնց Բաւփիզ (Paraphyses) անունը կու տան:

Ահա աւփումիսեր-ներու այս խումբին կը պատկանին նաեւ ամէն տեսակի խմորումներ պատճառող մանր ու միաբջիջ սունկերը՝ խմորուկները՝ որոնք Levures կը կոչուին:

Խմորուկները զուրկ են մինչեւ իսկ սրն-կաթելերէ եւ սունկերու ընտանիքին ամենապարզ ներկայացուցիչները կը կազմեն:

Ասոնք կ'աճին երբեմն պարզ ծլարձակումով, որ է ըսել մայր բջիջին եղերքէն ծիլ մը, ուստի մայր բջիջին եղերքէն նայ, ու մայր բջիջէն բաժնուելով՝ նոր միաւոր մը կը կազմէ: Բայց սովորաբար ասոնց սերունդը կը կատարուի աւփ-ի մը միջոցով, այս վերջին պարագային, խմորուկին մէջ գտնուող կորիզներուն շուրջ կը խտանայ նախանիւթը, թաղանթով մը կը ծածկուի ու սերմիկի մը կը վերածուի: Հետագային մայր բջիջին թաղանթը՝ սուրբակը կը պայթի ու միաբջիջ նոր խմորուկներ՝ սունկեր կը կազմուին (տե՛ս նկար թիւ 5):




Նկար թիւ 5. - Խմորուկներն ու իրենց սերունդը: Չախկողմեան նկարը կը ցուցնէ խմորուկներուն պարզապէս ծլարձակումի միջոցով բագմանալը, իսկ աջին՝ սերունդը տեղի կ'ունենայ ասք-ի մը մէջ:

Ասքումիսեթներու խումբին կը պատկանին ծառերուն տերեւներուն վրայ բոյն դրող շարք մը մակարոյժ սունկերը, խմորուկները, ինչպէս նաեւ կարգ մը մարմնեղ մեծ սունկերը:

Բջիջաւոր սնկաթելերու ընտանիքին երկրորդ խմբակը Պագիտիումիսեր-կոչուած սունկերէն կազմուած է:

Հոս ալ զոյգութիւն ունին սերմիկներու ծնունդ տուող մասնայատուկ յօրինուածքներ: Ասոնք ալ տուրակի ձեւ ունին, սրն-կաթելին միացած մասը նեղ է, մինչդեռ սերմիկներուն յատկացուած ծայրը լայն է: Այս լայն մասին վրայ, սովորաբար չորս եւ երբեմն ալ երկու կարծ թելեր երեւան կու դան, որոնցմէ իւրաքանչիւրը սերմիկի մը ծնունդը կու տայ (տե՛ս նկար թիւ 6):




Նկար թիւ 6. - Նկարին յատակին կը տեսնուին սնկաթելերու բջիջները, որոնց վրայ կը բարձրանան Պագիտիում կոչուող սերմնակիր յօրինուածքները, իրենց սերմիկներով միասին:

Պարկաճեւ յօրինուածքներուն Պագիտիում (Basidium) անունը կու տան, եւ ասոնց արտադրած սերմիկները Պագիտիոսպոր (Basidiospores) կը կոչուին:

Պագիտիումիսեթներու խումբին կը պատկանին մօտաւորապէս 14,000 տեսակի սունկեր, ասոնցմէ ոմանք մանրակազմ են ու ցորենազգիներու վնասակար մակա-

բոյժները կը կազմեն, իսկ ուրիշներ՝ խոշորակազմ եւ մսոտ են: Այս վերջիններուն շարքին կը պատկանին հովանոցաձեւ, զանգակաձեւ եւ ուրիշ մեծիկակ զանազան ձեւի սունկերը, որոնցմէ ոմանք կարելի է ուտել, իսկ ուրիշները՝ մահացու ըլլալու աստիճան թունաւոր են:

Ինչպէս որ ամէն մարդու ծանօթ է, հոս վանոցաձեւ սունկերուն ներքեւի երեսը



Նկար թիւ 7. - Հովանոցաձեւ մեծ սունկի մը ներքեւի երեսին վրայ տեսնուած մանրամասնութիւնները՝ սնկաթելերը, պագիտիումները եւ սերմիկները:

համակերպող շերտաւորումներով կազմուած է: Թիւ 7 նկարին մէջ տեսնուածը ահա՛ այդ շերտիկներէն զոյգ մը կը ներառէ՝ այդ շերտիկները իրարու միացած կայացնէ: Շերտիկները իրարու միջոցէն կարմրաձեւ երկար եւ ուղղաձիգ յօններով ծնունդ տուող մը, իսկ շերտիկներուն եղրներուն երկայնքին յատակ կերպով կը տեսնուին սերմիկները: Կանոնաւոր շարքը նուրի պագիտիումներու վրայ գտնուող սերմիկները:


Բագմարջիջ սնկաթելերու երրորդ ու վերջին խմբաւորումը կը կազմեն Հիփոմիսեր-ները (Hyphomycètes):

Այս խումբին պատկանող սունկերը բոլորն ալ նրբին բորբոսներէ կազմուած ըլլալուն Միւսէտինէ (Mucedinées) ալ կը կոչուին, mucedo բառէն, որ բորբոս ըսել է:

Կարգ մը սնկաբաններ, նկատի ունենալով որ սունկերու այս խումբը զուրկ է սերմիկներ արտադրող մասնայատուկ յօ-

րինուածքէ մը, սնկազգիներու զանազան ընտանիքներուն այլատեսաժանդամները կը նկատեն, ու զանոնք անկատար կամ թերակազմ կը կոչեն (Fungi imperfecti):

Արդարեւ այս տեսակ սունկերուն քով սերմիկներ արտադրող մասնայատուկ յօրինուածքներ զոյգութիւն չունին, սերմիկները կը կազմուին պարզապէս սնկաթելերուն միջոցով, որոնք բազմաթիւ ճիւղաւորումներ արձակելէ ետք, կը սկսին մէկը միւսին վրայ դիզուած սերմիկներ արտադրել: Սերմիկներու այդ շարանին Գոնիտի (Conidia) անունը կու տան (տե՛ս նկար թիւ 8):



Նկար թիւ 8. - Ճիւղաւորուած սնկաթելեր եւ ծլարձակումով անոնց արտադրած սերմիկները՝ Գոնիտիները:

Ինչպէս որ ըսինք, այս խումբին կը պատկանին բազմապիսի բորբոսներ, որոնց շարքին յիշատակութեան արժանի են աւբոմիցիլիս-ներն ու բեմիսիլիւմ-ները: Ասոնք, ինչպէս որ հետագային պիտի տեսնենք, մեծապէս օգտակար են պանիրի տեւեղան, կարգ մը հրաշք-դեղերու լինութեան, կարգ մը հրաշք-դեղերու պատրաստութեան եւ ուրիշ կարեւոր մարդերու մէջ:

ՏՈՔԹ. ՊԵՏՐՈՍ ՄԻՍԱԲԵԱՆ

(Շարունակելի)